ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻՐ ՎԱՐԱԶԴԱՏ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Լուսոյ Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյնն ու օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ մեր ժողովրդի անուանի զաւակիդ:

Մեծարգոյ պրն Ցարութիւնեան,

Գոհունակութիւն է Մեզ հաստատել, որ Ձեր բազմամեայ գործունէութիւնը արդիւնաշատ է մեր ժողովրդին ու Եկեղեցուն մատուցած անձնուէր ծառայութիւններով: Ձեր կեանքը Դուք անմնացորդ սիրով նուիրել էք հայ ճարտարապետութեանը՝ հեղինակել բազմաթիւ գիտական աշխատութիւններ, Ձեր աւանդը բերել ճարտարապետական մեր յուշարձանների պահպանութեանն ու բարեզարդմանը, հայ ճարտարապետական արուեստը ներկայացրել միջազգային հանրութեանը, եւ այսօր Ձեր բազմարդիւն վաստակը գնահատուած է պետական բազմաթիւ պարգեւներով ու գիտական բարձր կոչումներով՝ ճանաչում բերելով Ձեզ ինչպէս Հայրենիքում, այնպէս եւ նրա սահմաններից դուրս: Ձեր հանդէպ մեր ժողովրդի եւ հայրենի պետութեան երախտիքի եւս մէկ վկայութիւն է Ձեզ ԳԱԱ Ակադեմիկոսի պատուաւոր կոչման շնորհումը:

Մեծ է Ձեր աւանդը նաեւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շինութեան ու պայծառութեան գործում, որի բարձր գնահատանքով Երջանկայիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետը ազնիւ հայորդուդ կուրծքը արժանիօրէն զարդարեց մեր Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» պատուոյ բարձրագոյն շքանշանով: Տասնամեակներ շարունակ Ձեր անմիջական ու հեռեւողական ղեկավարութեամբ վերանորոգուեցին հինգ դասնեակից աւելի վանական համալիրներ, այդ թուում մեր հաւատքի կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Սուրբ Հռիփսիմեն, Սուրբ Գայանեն, Գեղարդը, Խոր Վիրապը:

Ցարգարժան պրն Ցարութիւնեան, Դուք սիրով ու նուիրումով ծառայել էք նաեւ ճարտարապետների նոր սերնդի պատրաստութեան շնորհակալ գործին: Երկար տարիներ վարելով Երեւանի Պոլիտեխնիկական ինստիտուտի Ճարտարապետութեան ամբիոնի վարիչի պատասխանատու պաշտօնը, Դուք Ձեր հարուստ փորձն ու գիտելիքներն էք փոխանցել կրթօջախի ուսանողութեանը եւ նրանց ներշնչել նախանձախնդրութիւն ու սէր հանդէպ ազգային եւ հոգեւոր մեր արժէքները: Այսօր Ձեր սաները մասնագիտական բարձր պատրաստուածութեամբ շարունակում են հայ ճարտարապետական արուեստի փառաւոր աւանդները եւ իրենց մասնակցութիւնը բերում մեր հնամենի սրբավայրերի վերանորոգութեանն ու նորերի կառուցմանը:

Ձեր ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով բերում ենք Ձեզ Մեր սէրն ու գնահատանքը եւ Հայրապետական այսու Սրբատառ Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ-ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալն Աստուած Իր հանապազ օրհնութեան ներքոյ պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ ամենայն բարիք, որպէսզի Դուք շարունակէք Ձեր ծառայութիւնները մեր ժողովրդին եւ Մայր Եկեղեցուն:

«Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մենք. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 10-ն Փետրուարի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 125